



Մ ՈՒՐՐԵ Յ ԱԿՈՐ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵՒ ԿԵՂԵՅԻ



ՅԻԱՆԱԿԻ Չորրորդ Կիրակի

18 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2022

ԸՆԹԵՐՑՈՒՄ

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ

(38.1-8)

Այն օրերուն Եզեկիա թագաւոր
հիւանդացաւ եւ մահուան
անկողին ինկաւ: Եսայի մարգարէն,
Ամոսի որդին, անոր քով եկաւ եւ ըսաւ.
«Տէրը այսպէս կ'ըսէ.- Քու տանդ
համար կարգադրուիլն ըրէ՝ յաջորդդ
նշանակելով, որովհետեւ կեանքիդ
օրերը վերջացած են եւ մահդ մօտ է»:

Եզեկիա երեսը պատին դարձուց եւ
այսպէս աղօթեց Տիրոջ. «Կ'աղաչեմ, ո՛վ
Տէր, յիշէ թէ արդար եւ ուղղամիտ եղայ
քու աչքիդ, եւ ըրի միայն այն ինչ որ
հաճելի է քեզի»: Եւ Եզեկիա դառնօրէն
լացաւ:

Այն ատեն Տէրը հրամայեց Եսայի
մարգարէին, ըսելով. «Գնա՛ եւ
Եզեկիային ըսէ.- Այսպէս կ'ըսէ Տէրը,
քու հօրդ՝ Դաւիթի Աստուածը. «Լսեցի
աղօթքդ, տեսայ արցունքդ եւ ահա
քեզի տասնըհինգ տարի եւս կեանք կու
տամ: Այլեւ Ասորեստանի թագաւորին
ձեռքէն պիտի ազատեմ թէ՛ քեզ եւ թէ՛
այս քաղաքը, Երուսաղէմը, որ անձամբ
պիտի պաշտպանեմ»: Եւ որպէսզի
գիտնաս թէ Աստուած իր խոստումը
պիտի կատարէ, Տէրը հետեւեալ
նշանը կու տայ քեզի: Տե՛ս, քու հօրդ՝
Աքազի արեւու ժամացոյցին ստուերը
տասներորդ աստիճանին վրայ ինկեր է
հիմա. բայց Տէրը զայն տասը աստիճան

ետ պիտի դարձնէ»:

Եւ իրապէս, ստուերը իր ինկած տեղէն
տասը աստիճան ետ գնաց:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ

ԵՐԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ

ՆԱՄԱԿԷՆ

(1.1-14)

Անցեալին բազմաթիւ անգամներ
եւ բազմաթիւ կերպերով
Աստուած մեր հայրերուն խօսեցաւ
մարգարէներուն միջոցաւ, իսկ այս
վերջին օրերուն մեզի խօսեցաւ իր
Որդիին միջոցաւ: Աստուած զինք ամէն
բանի ժառանգորդ կարգեց եւ անոր
միջոցաւ էր, որ տիեզերքը ստեղծեց:
Որդին, Հօրը փառքին լոյսը եւ անոր
էութեան ճշգրիտ պատկերը, որ իր
խօսքին զօրութեամբ տիեզերքը կը
պահէ, իր անձով մեր մեղքերը սրբելէ
ետք՝ երկինքի մէջ նստաւ Աստուծոյ՝
Գերագոյն Զօրութեան աջ կողմը:

Ան շատ աւելի բարձր է հրեշտակներէն,
ինչպէս Աստուծմէ իրեն տրուած
անունը ցոյց կու տայ. որովհետեւ ո՞ր
մէկ հրեշտակին երբեւիցէ Աստուած
ըսաւ. «Դուն իմ որդիս ես, այսօ՛ր քեզ
ծնայ»: Կամ որո՞ւ ըսաւ. «Ես անոր հայր
պիտի ըլլամ եւ անիկա՛ ինձի որդի»:
Դարձեալ, երբ իր անդրանիկ Որդին
աշխարհ կը զրկէր, ըսաւ. «Աստուծոյ
բոլոր հրեշտակները թող պաշտեն
զայն»:

Աստուած իր հրեշտակներուն մասին խօսած ատեն կ'ըսէ.

«Աստուած իր հրեշտակները ստեղծեց որպէս պատգամաւոր հոգիներ, եւ իր պաշտօնեաները՝ կրակի բոցի պէս»:

Մինչդեռ Որդիին կ'ըսէ.

«Քու աթոռդ, ո՛վ Աստուած, յաւիտեանական է. արդարութեամբ կ'իշխես թագաւորութեանդ վրայ: Արդարութիւնը կը սիրես եւ անիրաւութիւնը կ'ատես: Ահա թէ ինչու, ո՛վ Աստուած, քու Աստուածդ ուրախութեան իւղով օծեց քեզ քու ընկերներէդ աւելի»:

Դարձեալ, ուրիշ տեղ մը Որդիին կ'ըսէ.

«Դուն, ո՛վ Տէր, սկիզբէն ստեղծեցիր երկիրը, եւ երկինքը քու ձեռագործդ է: Անոնք պիտի կորսուին. բայց դուն կաս եւ կը մնաս: Անոնք հագուստի պէս պիտի մաշին. վերարկուի մը պէս պիտի ծալես զանոնք եւ հագուստի պէս փոխես: Բայց դուն միշտ նոյնն ես եւ քու տարիներդ վերջ պիտի չունենան»:

Բայց հրեշտակներէն որո՞ւն ըսաւ երբեք.

«Աջ կողմս նստէ, մինչեւ թշնամիներդ ոտքերուդ տակ դնեմ որպէս պատուանդան»:

Չէ՞ որ հրեշտակները Աստուծոյ ծառայող հոգիներ են եւ իր կողմէ կը ղրկուին օգնելու համար անոնց՝ որոնք փրկութիւնը պիտի ժառանգեն:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ
(17.1-10)

Յիսուս իր աշակերտներուն ըսաւ. «Գայթակղութիւններ անպայման որ պիտի պատահին, բայց վա՛յ այն մարդուն, որուն ձեռքով

ուրիշներ գայթակղութեան մէջ կ'իյնան: Նախընտրելի պիտի ըլլար որ իր վզին ջաղացքի քար անցընէին եւ զինք ծովը նետէին, քան թէ այս փոքրիկներէն մէկը գայթակղեցնէր: Հետեւաբար զգուշացէ՛ք: Եթէ եղբայրդ մեղք գործէ՝ յանդիմանէ զինք, եւ եթէ զղջայ՝ ներէ իրեն: Նոյնիսկ եթէ մէկ օրուան մէջ եօթն անգամ քեզի գալով ըսէ՝ կը զղջամ, պէտք է ներես իրեն»:

Առաքեալները ըսին Տիրոջ. «Աւելցո՛ւր մեր հաւատքը»: Յիսուս ըսաւ. «Եթէ մանանեխի հատիկին չափ հաւատք ունենաք եւ ըսէք այս թթենիին, “արմատախի՛ղ եղի՛ր եւ ծովուն մէջ տնկուէ՛”, վստահ եղէ՛ք որ պիտի հնազանդի ձեզի»:

«Ենթադրենք որ ձեզմէ մէկը ծառայ մը ունի, որ հողագործ է կամ հովիւ: Երբ ծառան դաշտէն դառնայ եւ տուն մտնէ, տէրը իրեն կ'ըսէ՞. “Անմիջապէս գնա՛, ճաշդ կեր”»: Բնականաբար՝ ո՛չ: Ընդհակառակը, անոր կ'ըսէ. “Ընթրիքս պատրաստէ՛ եւ գոգնոցդ կապելով սպասարկէ ինծի, մինչեւ ընթրիքս վերջացնեմ. անկէ ետք կրնաս ուտել եւ խմել”»: Կը կարծէ՞ք որ տէրը իր ծառային երախտապարտ պէտք է ըլլայ իր հրահանգները կատարելուն համար: Չեմ կարծեր: Դուք ալ նոյնպէս, երբ կատարէք ի՛նչ որ հրամայուած է ձեզի, ըսէք. “Անպիտան ծառաներ ենք, ինչ որ պարտաւոր էինք ընել՝ կատարեցինք”»:

«Եթէ մանանեխի հատիկին չափ հաւատք ունենաք եւ ըսէք այս թթենիին, “արմատախի՛ղ եղի՛ր եւ ծովուն մէջ տնկուէ՛”, վստահ եղէ՛ք որ պիտի հնազանդի ձեզի»: